«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ

ՈՒՐԾԱՁՈՐԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ»

ՊՈԱԿ

---

հեռ./286/1-51

ինդ.378214 Գ.Ուրծաձոր

N 29

08.10.2021թ.

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

ՊԱՐՈՆ Ռ. ԹԵՎՈՆՅԱՆԻՆ

Հայտնում ենք Ձեզ, որ Ուրծաձորի միջնակարգ դպրոցի քիմիայի ուսուցչի թափուր տեղի համար հայտարարվել է մրցույթ, որը տեղի կունենա 2021թ. հոկտեմբերի 21 --ին ժամը $14^{00}$-ին Ուրծաձորի միջն. դպրոցում ։ Հայտարարությունը տպագրվել է Կրթություն շաբաթաթերթում ս/թ հոկտեմբերի 6-ին թիվ 40-41 / 1013 - 1014 / համարում

Տնօրենի պաշտոնակատար Գ. Գրիգորյան

Կից ներկայացնում ենք հայտարարությունը

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Արարատի մարզի << Ուրծանորի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի քիմիա / 6 դասաժամ / ուսուցչի թափուր տեղի համար :

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և հարցազրույց ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի :

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում.

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է / Ձև 1 /
2. Փաստաթուղթ / դիպլոմ/ << Հանրակրթության մասին >> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճեն,
4. Ինքնակենսագրություն / Ձև 4 /,
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները / դրանց առկայության դեպքում /
6. Մեկ լուսանկար 3x4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները ՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք ,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ :

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև հոկտեմբերի 19 -ը ներառյալ, ամեն օր՝ ժամը $10^{00}$—ից $15^{00}$—ը, բացի , կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից :

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի :

Մրցույթը տեղի կունենա հոկտեմբերի 21-ին ժամը $14^{00}$—ին ,Արարատի մարզի Ուրծանորի միջնակարգ դպրոցում , հասցեն ՝ գ. Ուրծանոր Տիգրան Մեծի 30 :

Տեղեկությունների համար զանգահարել ՝ / 0234 / 86-1-51 հեռախոսահամարով :

Հ/Հ կոդ -- 04103833